

առանձին Երեմիան է ամբողջութեամբ. այսինքն մէկը այն տարօրինակ մարդոցմէն որոնք արեւմտահայ գրականութեան վաթսուներեւ ժամանակներու տարիներու ընթացքին եղան հրաշալի ընդունարանները, «ամանները» սրբազան բառ մը գործածելով, ձեռն, գոյնի, զգացման գեղեցկարար համադրութեանց: Դուրեան, Մեծարեան, Զրաքեան: Յանգձնութիւն, պոլսական տարփալից^(*) հոգեբանութիւն մը հաստատելու փորձը Երեմիայի մէջ, — Թեքեան, Ինձի համար կասկածէ դուրս է սա առուղ, արփաւոր, հանոյապաւս, քրտում, զղայամով, յանգուզն, քափառիկ, անյաղութ նկարագիրը մարդուն: Անշուշտ այդ բառերը ընդհանուր են բաւական որպէսզի պատշաճին մեր աս ուսան գրողին: Բայց կուգան նորէն այս ժողովուրդին անդրադոյն դարերէն: Սորհած ունի՞ք թէ ինչ ընկերութեան կը պատկանի այդ մարդը: Տեղը չէ հոս մանրամասն վերլուծման ենթարկել մեր Ժէօ դարը: Բաւ է յիշողքել միայն որ այդ հասարակութիւնը մեծ ազդեցութիւն խուճապահար մարդոց ամբոխ մըն է որ գլուխը սեղմելու անկիւն մը հազիւ ճարած, կ'անդրադառնայ իր վրայ գործադրուած անողորմ պատգամներու և ներքնապէս կ'ըմբոստանայ իրեն սորվածին ու իրեն իբր ճշմարտութիւն մատուցուածին դէմ: Օրագրութիւնը ունի սարսռազգե-

ցիկ էջեր այդ հոգեբանութիւնը արտայայտող: Մինակ Տէրտէրի տղայ մը ըլլալուն չէ որ կը խորանարդէ այդ դասակարգին հանգէպ գործադրուած ճիւղային արարքներուն տարողութիւնը: Իրական են այդ մարդերը որոնք տէրտէր կը ծեծեն, դանոնք կը պառկեցնեն ժամերու բակին, անոնց ոտքերը կը պայտեն, պատրիարք մը բանա կը նետեն ու թոյնով կ'ըսպանեն: Միւսնոյն բաները, այդ դարէն, կը պատմէ ուրիշ մը Լեհաստանցի Սիմէոն զպիրը իր Ուղեգրութեան մէջ: Իր դարուն մեծ հարցերուն հաղորդ է ամէն մարդ: Գրագէտը այն է որ այդ հարցերը պատմած է իր դարէն վերջ ալ շահեկան հրապոյրով մը, ինքնութիւնը պահող ու մեզ գոհ ձգող:

Թող կանչուի Երեմիա ողբալու կաթողիկոս մը, բնութեան մեծ ազդեցող մը, նահատակութիւն մը, անիկա պիտի ընէ այդ պարտքը բացարձակ հարազատութեամբ նախ նիւթին յետոյ ինքը իրեն ու պիտի գտնէ շեշտը, ոգին, ջերմութիւնը, երանգը որոնցմով մեր անձնականութիւնը կ'անցնի մեզմէ զուրսին, հեռուին: Մեր բառերուն մէջէն ստուերի մը նման որ կեանք ունենար: Գիտէ՞ք թէ քնարերգակ բանաստեղծի մը սահմանը կայ սա կարճ տարագլին ետին:

Թ. ՕՇԱԿԱՆ

(Երբեք չէ)

Ճշգրտապաշ ուղղափառութեամբ: Ինչ փոքր ուրեմն իր մեղքերը, երբ հսկանակ ասունց, անիկա զաղճնիք ունի զիս գրաւելու: Դժուար պիտի չըլլար Դժուար անոր փրակը: Այն ասեմ պիտի զտեմ իւրաքանչիւր նախադասութեան ակապումին վկայութիւնը: Զեմ խօսիւր հոս ու հոն պոռպոռացող pedantներէն որոնք օրհնակներ կը ձեռնէ մեր գլխուն երբ կիս դար գրիչ շարժելի վերջ չեն յաջողիր կենդանի էջ մը ստորագրել: Քերականները պիտի ք սփոփուին, իրենց դժբախտութեանը փաստը ոչ քի ճարտարով, փոշով, այլ լոշով, դիտելով ուրիշները որոնք գեղ սղիկ կ'ըսեն: Զեմ հանդուրժած գրել չկրցող փնայատութիւնը: Կը մեմակ սնարքեր գրել սորվեցնել ձգող պատուիրութեան առջեւ:

(*) Ինչ մեծ սարքերութիւն արեւելահայ սիրային փնարգութեան եւ արեւմտահայ պոլսահայ սիրերգութեան մեջէն: Կ'սրժե կեանք ու խորհրդածել:

Յորժամ կամենայ ո՞ սիրուն վարդ բաղել, Պիտի փռով զձեռնս ի յարիւն շաղախել, Միտք ա՛մ զսերմանացանց՝ ո՛րքան համբերել, Մինչեւ գայ ժամանակ որ պիտի հնձել:

Ամենայնի չափ կայ եւ ժամանակ կայ, Թե առաւօտն ելնուս եւ իրիկունն կայ, Զերեկս քի յես ձրգես՝ եւ առաւօտն կայ, Մինչեւ որ քեզ բարի ժամանակըն գայ:

ԵՐԵՄԻԱ ԶԵԼԷՊԻ